

ՆԱՄԱԿ ՄԵՂԱԻՈՐ ԿԵԱՆՔԻ ՄԸ ԽՈՍՏ ՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ո՛վ իմ մեղաւոր անձս, ի՞նչ ունիս ըսելիք, եթէ երբեք այսքան դեղերով չես բժշկուիր: Աճապարէ՛, մի ուշանար, արթնցի՛ր քու վտանգաւոր քունէդ, ետ դարձի՛ր դէպի կուրուստ տանող քու ճամբէդ. ձրու՛՛ տգիտութեան խաւարը. սքափէ՛ քու անմիտ մոլութիւններէդ եւ դուն քեզի՛ եկուր. թօթափէ՛ քեզմէ մեղքերուդ սաստկութիւնը. թեթեցո՛ւր անօրէնութեանդ բեռը, քաւէ՛ անթիւ ու անհամար օրինազանցութիւններդ, բժշկէ՛ վերքերուդ խոցը եւ լուս՛ ամբարշտութեանդ տիղմին գարշահոտութիւնը, որպէսզի մաքրուած եւ սրբուած հոգիով, լուսազարդուած եւ պայծառացած մարմնով, համարձակ դէմքով ու զուարթ երեսոյթով, բազմութեան հետ անցնիս տիեզերական ահեղ եւ անթիւ բանակներուն առջեւէն, ելլելու համար Աստուծոյ ահաւոր եւ մեծ ատեանին առջեւ եւ աշխարհատես հրապարակին վրայ լսելու անոր երանութեան քաղցրալուր բարբառը. «Եկէ՛ք Հօրս կողմէ օրհնեալներ եւ ժառանգեցէ՛ք երկինքի բարութեանց զուարճութիւնը» Հօրը, Որդոյն եւ Ս. Հոգոյն հետ, որուն փառք եւ պատիւ, յաիտեանս յաիտենից: Ամէն:

ՃԱՌԵՐ Յ. Մանդակունի

ԵՐԲ ԿՈՒՉԵՍ ԳԻՏԱԿԱԼ, ԹԵ ԽՆՉՊԵՍ ԱՍՏՈՒԿԸ ԿԸ ՆԱԽԱԽՆԱՄԵ ՈՒ ԿԸ ՀՈԳԱՅ ԲՈՒՈՐ ԱՐԱՐԱԾՆԵՐԸ, Կարդա՛ Սաղմոս 36 ++++++ **Մարունակութիւնը նախորդ քիւին** Տէր, բու սերդ երկինքին պէս անսահման է: Հաւատարմութիւնդ՝ միմչեւ ամպերը կը հասնի: Արդարութիւնդ լեռներուն պէս բարձր է, դատաստաններդ՝ ովկեանոսներուն պէս խորունկ: Դուն է, որ կը հոգաս մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէ՛ր: Ի՞նչ թանկագին է հոգածութիւնդ, ո՛վ Աստուած. բոլոր մարդիկ բու թեւերուդ հովանիին կ'ապաւինին: Քու տաճարիդ առատ օրհնութիւններով կը լիացնես զանոնք, շնորհներու բու գետէդ խմել կու տաս դուն անոնց:

Որովհետեւ դո՛ւն ես կեանքի աղբիւրը, լոյսո՛վդ է որ մենք լոյսը կը տեսնենք: Մշտակա՛ն ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ, որոնք քեզ կը ճանչնան եւ արդարութիւնդ անոնց վրայ, որոնք սրտով ուղիղ են: Թո՛յլ մի՛ տար, որ ամբարտաւան մարդիկ ընկնեն զիս, չարագործները յաջողին զիս հալածել: Հոն՝ պիտի իյնա՛ն բոլոր անոնք, որոնք անօրէնութիւն կը գործեն, պիտի տապալին եւ ա՛լ բնաւ չկանգնին:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԲՈՒ ԽՍՐԹԻ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍԴ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 22 ՆՈՅՏԵՄԵՐ 2020 ԹԻԻ 47

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀՎԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Եւ. 36.1-9: Ա. Թւ. 1.1-10: ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 12.13-31

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 12.13-21

Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ. «Վարդապետ, ըսէ՛ եղբօրս, որ մեր հօր ձգած ժառանգէն իմ բաժինս տայ ինձի»: Յիսուս պատասխանեց. «Ո՛վ մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ»: Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք ազահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ չէ իր ամբարած հարըստութենէն»:

Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ. «Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտեմարաններուն մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտեմ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինձի պիտի ըսեմ. Ո՛վ մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգիստ ըրէ՛. կէ՛ր, խմէ՛ եւ ուրախացի՛ր»: Բայց Աստուած ըսաւ իրեն. «Անմիտ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն, որո՞ւն պիտի մնայ պատրաստածոյ»: Եւ Յիսուս եզրակացուց. «Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Մի՛ մտահոգուիք ձեր ապրուստին համար, թէ ինչ պիտի ուտէք, եւ ոչ ալ ձեր մարմիններուն համար, թէ ինչ պիտի հագնիք: Որովհետեւ կեանքը աւելի կարեւոր է քան ուտելիքը, եւ մարմինը աւելի կարեւոր՝ քան հագուստը: Դիտեցէ՛ք ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձնեն, ո՛չ շտեմարաններ ունին եւ ո՛չ ամբարներ, սակայն Աստուած կը կերակրէ զանոնք: Աստուած պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ Աստուծոյ աչքին թռչուններէն գերազանց էք: Մտահոգուիլը, որեւէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞: Եթէ նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք: Դիտեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ ինչպէս կ'աճի դաշտի շուշանը: Ո՛չ կը հիւսէ եւ ո՛չ ալ հագուստ կը կարէ: Հաւատացէ՛ք, որ նոյնիսկ Սողոմոն իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ չկրցաւ հագնիլ: Եթէ Աստուած այդպէս աղոտ կը հագցնէ խոտը, որ այսօր դաշտին մէջ է եւ վաղը կրակը պիտի նետուի, ձեզ աւելի լաւ պիտի չհագցնէ՞, թերահաւատներ:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎ ՄԱՎԿՆԵՐ**

**ԵՍՍՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ
36.1-9**

Եզեկիայի թագաւորութեան տասնչորրորդ տարին, Ասորեստանի Սենեֆերիմ արքան յարձակեցաւ Հրէաստանի բերդափաղաֆներուն վրայ եւ զանոնք գրաւեց: Լաֆիշ ֆաղաֆէն, Սենեֆերիմ մեծ զօրքով մը իր հրամանատարը դրկեց Երուսաղէմ, Եզեկիա թագաւորին հետ բանակցելու: Հրամանատարը եկաւ կանգ առաւ թափիչին արտը տանող ճամբուն վրայ գտնուող ջրանցքին վերին աւազանին շուրջ: Եզեկիայի կողմէ անոր ժողովը եկան Քեղիկայի որդի Եղիակիմը, որ արքունի հազարապետն էր, հրովարտակներու ֆարտուղար Սոմանը եւ Ասափի որդի Յովաքը, որ արձանագրութիւն պահող ֆարտուղարն էր: Հրամանատարը ըսաւ անոնց.

– «Գացէ՛ք ըսէ՛ք Եզեկիայի-Այսպէս կ'ըսէ Ասորեստանի մեծ թագաւորը. «Ի՞նչ բանի ապաւինեք ես: Երեւակայութեամբ ու խօսքով պատերազմ կը մղուի՞: Որո՞ւ ապաւինեք ես հիմա, որ ինծի չես ենթարկուիր: Եթէ յոյսդ դրեր ես Եգիպտոսին, այդ եղեգէ մականին վրայ, անիկա ջախջախուած է արդէն. անոր կոթնողը կ'իյնայ եւ անով իր ձեռքն ալ կը վիրաւորէ»: Այո՛, ջախջախուած եղէ՛ք մըն է Եգիպտոսի թագաւորը, փարաւունը, եւ այդպէս ալ պիտի ջախջախուին բոլոր անոր ապաւինողները:

**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ**
Քրիստոնէական դաստիարակութիւնը մնայուն ընթացք մըն է, որ կը սկսի ընտանիքէն ու կը շարունակուի դպրոցի ու եկեղեցւոյ ճամբով:
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



1.1-10

Մենք՝ Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներու եկեղեցիին, որ Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Շնորհիք եւ խաղաղութիւն ձեզի:

Մեր աղօթքներուն մէջ միշտ կը յիշենք ձեզ եւ անդադար ձեզի համար գոհութիւն կը մատուցանենք Աստուծոյ: Հօր Աստուծոյ առջեւ միշտ կը յիշենք, թէ ի՛նչպէս կեանքի կը վերածէ՛ք ձեր հաւատքը, սէրէն մղուած կը ծառայէ՛ք ուրիշներուն, եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յուսալով՝ նեղութիւններու կը համբերէ՛ք:

Եղբայրներ, գիտէ՛ք թէ Աստուած ձեզ սիրեց եւ ընտրեց, որովհետեւ մեր ֆարոգութեամբ Աստուած իր Աւետարանը յայտնեց ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ՝ գորութեամբ, այսինքն Սուրբ Հոգիի ներգործութեամբ, եւ կատարեալ վստահութիւն ներշնչեց ձեզի: Դուք լաւ գիտէ՛ք, թէ ձեր մէջ ի՛նչպէս ապրեցանք, ձեզի օրինակ ըլլալու համար: Մեզի նմանելով դուք Տիրոջ նմանած եղաք, քանի որ հակառակ ձեր կրած բոլոր նեղութիւններուն՝ Սուրբ Հոգիին պարգեւած ուրախութեամբ ընդունեցիք մեր ֆարոգութիւնը, եւ ձեր այդ ընթացքով օրինակ եղաք Մակեդոնիայի եւ Աֆայիայի բոլոր հաւատացեալներուն: Արդարեւ դուք ձեր օրինակով Տիրոջ խօսքը հոչակեցիք ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աֆայիայի մէջ, այլեւ ամէն տեղ, ուր Աստուծոյ վրայ ունեցած ձեր հաւատքին համբար տարածուեցաւ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾՄՇՈՒՆՉԷՆ

ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
«Ընծայումն Ս. Աստուածածինի»

Ըստ աւանդութեան, Մարիամ Աստուածածին զաւակն էր Յովակիմի եւ Աննայի: Ան ուխտով ստացուած զաւակ ըլլալուն համար ծնողքը՝ իրենց ուխտին համաձայն՝ Մարիամը ընծայած են տաճար, երբ ան երեք տարեկան էր, որպէսզի հոն աստուածապաշտութեամբ զարգանայ ու տաճարին ծառայէ:

Այս նուիրման օրն է, որ կը յիշատակուի Աստուածածնի ընծայման օրը, որ կը կատարուի ամէն տարի անշարժ թուականի մը, Նոյեմբեր 21-ին, որ օրն ալ հանդիպի այդ թուականը:

Ընծայման տօնը Աստուածածինի նուիրում տօներէն մէկն է: Անկէ անկախ՝ կան նաեւ Աստուածածնի կեանքն ու տիպարը ծանօթացնող եւ յիշատակող այլ տօներ, ինչպէս՝ Յղութեան տօն, Ծնունդ Ս. Աստուածածինի, Աւետում, Վերափոխում, Գիւտ գօտիի եւ Գիւտ տուփի:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ
Եթէ իմաստութիւնը միշտ ներկայ ըլլայ մէջդ եւ գիտութիւնը անձիդ համար օգտակար նկատես, այն ատեն բարի խորհուրդները քեզ պիտի պահեն եւ մաքուր մտածումները քեզ պահպանեն, որպէսզի քեզ փրկեն չար ճանապարհէն եւ նենգամիտ մարդէն:
ԱՌԱԿ 2

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞ՆՉ Է ԱՂՕԹՔԸ
Աղօթքը լեզուն է երկինքին ու անոր սուրբ Գահակալին: Առանց այդ լեզուն գիտնալու չենք կրնար Աստուծոյ հետ հաղորդակցութեան ու յարաբերութեան մէջ ըլլալ: Աղօթքը, մեր երկնաւոր Հօրը թելերուն տակ մտնել է: Աղօթքը, մեր հոգիին հաղորդակցութիւնն է Սուրբ Հոգիին հետ: Աղօթքը, մեր սրտին միացումն է Յիսուսի սրտին հետ:

Աղօթքը արարածին երկխօսութիւնն է իր Արարիչին հետ: Ահա թէ ինչու, հաւատացեալ մարդը պէտք է զգուշանայ մենախօսութենէն աղօթքի պահուն: Ի՞նչ պիտի ընէիր, եթէ քովդ մէկը գար եւ մէկ ժամ խօսէր եւ ասպա ձգէր երթար, առանց առիթ տալու քեզի որ բառ մը ըսէիր: Աղօթքի պահուն, հաւատացեալ մարդուն նպատակը պէտք է ըլլայ Աստուծոյ ձայնն ու խօսքը լսելը, եւ ո՛չ թէ իր ձայնն ու խօսքը Աստուծոյ լսելի դարձնելը: Աւելի կարեւոր է, որ մենք լսենք Աստուծոյ ձայնը քան Աստուած՝ մեր ձայնը, որովհետեւ Աստուած արդէն գիտէ, թէ ի՛նչ պիտի խնդրենք ու ի՛նչ պիտի ըսենք, մենք սակայն չենք գիտեր, թէ Աստուած ի՛նչ պիտի ըսէ կամ պատուիրէ: Ահա թէ ինչու, յատուկ ճիգ պէտք է թափենք սրելու ու մարգելու մեր հոգիի սկանջները, որպէսզի կարենանք լսել Աստուծոյ ձայնը:

ՅԻՍՈՒՍ ԱՂՕԹՈՂՆԵՐՈՒՄ Կ'ԸՍԷ. «Երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր Հօրդ: Եւ Հայրդ, որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս»: